**Արձանագրություն №4**

**ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ -ի 2020 թվականի կարիքների համար անհրաժեշտ գնանշման հարցման բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով ՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/19 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի**

ք.Արովյան 02.03.2020թ. ժամը 12:00

Նիստին մասնակցում էին՝

նախագահ՝ Հարություն Արույան

անդամներ՝ Էդուարդ Կաբասակալյան

Մարգարիտա Շադինյան

Անահիտ Մամիկոնյան

Քարտուղար՝ Արթուր Աբգարյան

**1.Տեղեկություններ հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**

**Հարություն Արույան**

Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Էլ. հասցե |
|---|---|---|
| 1 | «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ | lawyer@c-e.am |
| 2 | «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ | aida.trade@yandex.ru |
| 3 | «Ռոմա» ՍՊԸ | gnumner@romamed.am |
| 4 | «Լինարե» ՍՊԸ | linare50@mail.ru |
| 5 | «Վիոլա» ՍՊԸ | viola@arminco.com |
| 6 | «Արմենֆարմ» ՍՊԸ | armenpharmllc@gmail.com |
| 7 | «Խաչպար» ՍՊԸ | khachpar.llc@gmail.com |
| 8 | «Նատալի ֆարմ» ՍՊԸ | natalipharm@bk.ru |
| 9 | «ՍՄՏ-ԲԵՏՍ» ՍՊԸ | v.melikjanyan@arm-smd.com |
| 10 | «Նուվել Ֆարմա» ՍՊԸ | tendernouvelle@gmail.com |
| 11 | «Մեդտեխսերվիս» ՍՊԸ | medtechservice@mail.ru |
| 12 | «Լիաննա Կաչյանց» ՍՊԸ | liana-kachyants@rambler.ru |
| 13 | «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ | tender.levonlamara@gmail.com |
| 14 | «ԼԵՅԿՈ» ՍՊԸ | leykoalex@gmail.com |
| 15 | «Դեզսերվիս» ՍՊԸ | service_dez@mail.ru |
| 16 | «Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ | tenders@margpharma.com |
| 17 | «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ | szpharma@yahoo.com |

**ընդունվել է որոշում՝ 4 կողմ, 0 դեմ**

**2.Տեղեկություններ հայտեր պարունակող ծրարները սահմանված կարգով կազմելու և ներկայացնելու համապատասխանության մասին**

---

**Հարություն Արույան**

2.1 Մասնակցների կողմից ներկայացրած ծրարները կազմված և ներկայացված են սահմանված կարգին համապատասխան:

**ընդունվել է որոշում՝ 4 կողմ, 0 դեմ**

**3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանության մասին**

---

**Հարություն Արույան**

3.1 Մասնակիցների կողմից ներկայացրած յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերը առկա են և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան, բացառությամբ «Վիոլա» ՍՊԸ-ի, որի գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, այն է՝ «Վիոլա» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել մեկ չափաբաժնի համար՝ «Կուագուլոմետրի կյուվետներ», սակայն հրավերով վերոնշյալ անվանումով ապրանք նախատեսված չի եղել: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները հանձնաժողովը որոշեց մերժել «Վիոլա» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

**ընդունվել է որոշում՝ 4 կողմ, 0 դեմ**

**4. Մասնակիցների կողմից առաջարկված գների մասին**

---

**Հարություն Արույան**

4.1 Կազմակերպությունների կողմից գնային առաջարկները ներկայացված են exzel ֆայլով:

**ընդունվել է որոշում՝ 4 կողմ, 0 դեմ**

**5.Ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջների մասին**

---

**Հարություն Արույան**

5.1 Մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին, բացառությամբ՝ «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի, վերջինիս կողմից ներկայացված հայտի 1.1 հավելվածում 2, 11, 13, 27, 33, 36, 50, 51, 52, 53, 54, 75, 80, 82, 83, 102, 130 և 140 չափաբաժիններում բացակայում է առաջարկվող ապրանքների արտադրողի անվանումը, «Դեզսերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի 1.1 հավելվածում 8, 70, 71, 72, 73, 74 և 82 չափաբաժիններում բացակայում է առաջարկվող ապրանքների արտադրողի անվանումը, «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի 1.1 հավելվածում 11, 18, 67, 68, 69, 70, 72, 73, 74, 80, 82, 83, 85 և 132 չափաբաժիններում բացակայում է առաջարկվող ապրանքների արտադրողի անվանումը, «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի 1.1 հավելվածում 38, 39, 40, 42, 43, 60, 61, 109 և 110 չափաբաժիններում առաջարկվող ապրանքների ասեղների շրջանագծի չափսերը նշված չեն, 137-րդ չաբաբաժնում նշված չէ ներկայացված ախտահանիչ միջոցը նախատեսված է արդյոք

ուլտրաձայնային սարքի հետազոտության ներդիտակների ախտահանման և մաքրման համար, 141-րդ չափաբաժնում հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված է, որ որպես ազդող նյութ պարունակի սպիրտի /էթանոլ/ առնվազն 60%, իսկ հայտի 1.1 հավելվածում ներկայացված է՝ պարունակում է իզոպրոպանոլ (պրոպանոլ-2) 40%, հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված է մատակարարը լուծույթի հետ մեկտեղ պետք է անհատույց օգտագործման տրամադրի թվով 50 հատ դիսպենսեր սարք, սակայն հայտի 1.1 հավելվածում չի նշված 50 հատ դիսպենսեր սարքերի տրամադրման վերաբերյալ տեղեկություն, «Արմենֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի 1.1 հավելվածում առաջարկվող ապրանքի 137-րդ չաբաբաժնում նշված չէ ներկայացված ախտահանիչ միջոցը նախատեսված է արդյոք ուլտրաձայնային սարքի հետազոտության ներդիտակների ախտահանման և մաքրման համար:

**ընդունվել է որոշում՝ 4 կողմ, 0 դեմ**

**6.Հանձնաժողովը որոշեց՝**

**-------------------------------------------------**

**Հարություն Արույան**

6.1 Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով պետք է ծանուցի «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին, «Դեզսերվիս» ՍՊԸ-ին, «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ին, «Խաչպար» ՍՊԸ-ին և «Արմենֆարմ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրության 5.1-րդ կետում նշված անհամապատասխանությունները:

**ընդունվել է որոշում՝ 4 կողմ, 0 դեմ**

**7 . Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման վայրը, օրը և ժամը հաստատելու մասին**

**-----------------------------------------------------------------------------------------------**

**Հարություն Արույան**

7.1 ՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/19 ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա 04.03.2020 թվականին, ժամը 14:00 -ին ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ ք. Աբովյան, Արզնու խճուղի 10 հասցեում:

**ընդունվել է որոշում՝ 4 կողմ, 0 դեմ**

Հանձնաժողովի նախագահ ՝_________________ Հարություն Արույան

Անդամներ ՝ _________________ Էդուարդ Կաբասակալյան

_________________ Մարգարիտա Շադինյան

_________________ Անահիտ Մամիկոնյան

Քարտուղար՝ _________________ Արթուր Աբգարյան